

ՄԵՆԱ- ԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Կան զարմանալի մարդիկ, ում անուն-ազգանունն արդեն սպառիչ է այնքան, որ ներկայացնելու հարկ չի զգացվում: «Օ1—99», «Տերն ու ծառան», «Լուսանկար», «Կուկլասի գերուհին», «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Կտոր մը երկինք», «Խաթաբալա», «Միսինո», «Հին օրերի երգը», «Մեր մանկության տանգոն», «Ղազարը գնում է պատերազմ», «Պատասխար աղբար»... Այս ամենն իրիվության չհավակնող թվարկումը ռեժիսորների, սցենարիստների, դերասանների բազմազանության մեջ ունի կրկնվող մի անուն՝ Մենք Մկրտչյան: ՍՍՀՄ ժողովրդական դերասան, պետական մրցանակների դափնեկիր, մի անհատականություն, ում համար բեմը գաղտնիքներ չունի, ում հարազատ տարերքն են թատրոնի լույսերն ու կինոյի լուսարձակները, ում մշտական ուղեկիցն են ծափերը, ծափերը, ծափերը, և միայն հոգու խորքում այդ անմոռաց դեմքով մարդը, ում անգամ լուրջությամբ հանդիսասրահը կարող է լցնել հոմերական քրքիջով կամ անսպասելի տխրությամբ, ահա այդ նույն ինքնատիպ դեմքով զարմանալի հայր հոգու խորքում դեռ անխաթար, մի քիչ միամիտ, չափավոր խորամանկ ու արդեն իրեն բեմում զգացող երեխա է:

Երբ գրույցը նրա հետ պատրաստվում էր տպագրության, նպատակահարմար գտանք հանել հարցերը և այդպես ստացվեց դերասանի մենախոսությունն իր դերերի, իր խոհերի, իր կյանքի ու ժամանակի հետ: Իսկ առաջադրված հարցերը կարծես թե չոր էին ու «ակադեմիական»։ Ինչպե՞ս կարող են օգնել թատրոնը և կինոն լեզվի անաղարտության պահպանմանը, ինչպիսի՞ն պիտի լինի մայրենի ուսուցիչը, գեղեցկի իր ըմբռնումը...

Արդյունքը ներկայացնում ենք ընթերցողներին...

✦
Վերջերս շատ է խոսվում բեմից մարտի, գեղեցիկ հայերեն լսելու և սովորելու մասին, և սկսում են մտածել, թե ինչ և ինչպես են պատկերացնում այդպես ստղծները: Գրական լեզուն և բեմական լեզուն շատ կողմերով տարբեր հասկացություններ են: Պատկերացրեք, թե ի՞նչ է կատարվում գրական լեզվի

ետ բեմում աղետների, սպանությունների, մշակորույս սիրո, վախի, սարսափի, ցնծության, հանցագործության, հոգեկան զանաան ծանր վիճակների մեջ: Ներկայացումը ստեղծական ծես է, որի ժամանակ հանդիսատեսը և դերասանը ինքնամոռացության մեջն (խոսքս կատարյալ ներկայացման մասին): Բացի այս, բեմում իշխում է կերպարային նոստալգիան, որը նշանակում է զանազան լարդիկ, կերպարներ, գործողություններ իրենց ռեդի և ժամանակի մեջ՝ մարդը իր կենսաբանությամբ, ներկայով, իր փոքր կամ մեծ գտնումներով: Բեմում սուր հոգեբանական վիճակներում մարդու խոսքը կարող է աղալաղվել, գունատվել, շիկանալ, շողշողալ... Ետ ավելին՝ բեմում կարելի է խոսել ստանց տարի: Գեղեցիկ լեզուն, և ինչու միայն լեզուն, երասանի, նկարչի, կոմպոզիտորի, վերջապես ռեժիսորի բոլոր ջանքերը ձուլված են նանդիսականին հեղինակի սուսջադրած աշարհը տեղափոխելու գործին: Բայց սա չի լծանակում, որ բեմում կարելի է խոսել գեղիկ: Ամեննի՛ն: Սրա համար էլ գոյություն ունի դպրոց, որտեղ սովորում են լեզու, ճապակ, չափավորություն: Գոհեցիկ խոսք ավելի նախա նկատվում է բեմում բարբառով խոսելու դեպքում: Մենք ունենք հրաշալի բարառներ, որոնք հարստացնում են դրամատորգիան: Բայց մեր դերասաններից քչերն են կարողանում խոսել մեկից ավելի և մաաախանո՞ գեղեցիկ բարբառով: Եթե սրան ավելացնենք անտաղանդ կատարումը, ինչ խոսք, կատարվի կատարյալ գոհակություն: Բարբառի մասին խոսելիս բավական է հիշել Սուրեն Բոչարյանին: Ի՞նչ սրանչելի էր հրնչում Թումանյանի «Առաջիկ նրակներ» (և ոչ միայն դա) նրա կատարմամբ. ամեն նախադասությունը, ամեն բառը համապատասխանում էր գեղագիտության ամենաբարձր չափանիշներին, և դահլիճը թնդում էր ծափահարություններից: Իմ կարծիքով, դա իսկական գեղարվեստական սխրանք էր:

Դերասանի գործիքը խոսքն է: Նրա միտքը, սիրտը, երևակայությունը, հավաստիությունը, հմայքը, տաղանդը—ամեն ինչ գործադրվում է կերպարաբանափոխվելու համար, և երբ նոր կերպարը սկսում է գործել, կարևորվում է խոսքի նշանակությունը: Խոսքը կարող է դուրս թռչել դերասանի շուրթերից որպես չարանի մի սրախոսություն կամ միամիտ մի զարմանք, անօգնական մի զայրույթ, մի անմատ խրատ, մի վախկոտ նախատինք: Անսպասելիորեն կարող է խոսքը դուրս գալ կանկերգակի շուրթերից հոգնած, անտեղի զարմացած, կծող, խարազանող: Հրաշք էր խոսքը վահրամ Փափազյանի շուրթերին Օթելլոյի մենախոսության ժամանակ: Չհավատալով Դեզդեմոնայի դավաճանությանը՝ նրա դուրս գալիս շուրթերի արանքից դուրս էր գալիս վախկոտ խոսքը, հանկարծ դուրս կթռչեր «իրա՞վ, Ցագո» աշխարհից անտեղյակ խոսքը, կասկածի վերջնակետին քերանը փակ Փափազյանի աչքերից դուրս կպոթկար «արա՞ն» խոսքը ու հանկարծ՝ ծունկի եկած, երեսն աստղերին՝ դուրս էր շարտում շիկացած խոսքը, անհասկանալի: Հապա ինչպես էր բզկտվում խոսքը «թաշկինակի» տեսարանում, աղբասի տեսքով՝ երբ աղերսում էր, հետո կարծես աղոթում էր, երբ վերցնում էր թաշկինակը առանց նայելու, ինչպե՞ս էր վանկով, տատերով հավատում: Իսկ երբ նկատում էր, որ թաշկինակը իր նվերը չէ, բառերը սուր-սուր փշեր էին, թունոտ փշեր էին, դաժան, մահացու: Ծերսպիրը խոսք չունեք այս տեսարանում, բայց սա ներկայացման ամենապերճախոս տեսարանն էր: Պատկերացրեք մի պահ, որ այս ներկայացումից հետո մի հանդիսատես ասի. «Ի՞նչ գեղեցիկ հայերենով էր խոսում Փափազյանը»: Կատարվեք, որ թատրոնի ինքնամոռաց կախարդանքը դարձել էր հանգիստ, սառը զմայլանք:

Գեղեցիկ ըմբռնումը... Բարդ հարց է, բայց և հեշտ: Ես տեսնում եմ գեղեցիկը: Դուք ծաղիկ սիրում եք: Ես փուշ եմ սիրում: Տեսել եք՝ գլորվում է ու գնում: Չի թառամում, չի խամբում: Փշից էլ գեղեցիկ բա՛ն... Հետո ես տղա-խոսք մարդկանց եմ սիրում: Երազում եմ խաղալ այն մարդու դերը, որ դժբախտ է, բայց չզիտե, դեռ ու դեռ է ընկնում, բոլորին լավություն է անում, բայց ինքը կյանք չունի, մեռնակ է, դժբախտ ու անտեղյակ... Խորհուրդներ տալ չեմ սիրում, իսկ եթե պնդում եք, միայն մի խորհուրդ կարող եմ տալ ուսուցիչներին՝ սիրահարվել: Սիրահարվել երեխաներին, սիրահարվել դասավանդող առարկային: Ուսուցիչ լինել նշանակում է ճանաչել ինքն իրեն: Երեխան ստեղծագործություն է, պետք է զգույշ, խնամքով, համբերությամբ ու հիացմունքով, հավատով մոտենալ նրան ու սիրել, սիրել, սիրել...

Մենախոսությունն ունկնդրեց
ու ընթերցողներին ներկայացրեց
ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄՅԱՆԸ

